

## ՈՐՈՇՈՒՄ

ԵԹԿՊԻ-ի գիտական խորհրդի 2016թ. նոյեմբերի 24-ի

նիստի /արձ. 3/

1. Հաստատել բակալավրի կրթական ծրագրով ներքոհիշյալ մասնագիտությունների 2017թ. ընդունելության ծրագրերը և գնահատման չափանիշները՝

1.1 Տեսալսողական արվեստ

- Օպերատորություն

1.2 Կինոարվեստ

- Կինոարվեստ

1.3 Կերպարվեստ

- Թատրոնի կինոյի և հեռուստաուլորտի նկարչություն

1.4 Պարարվեստի ռեժիսուրա

- Պարարվեստի ռեժիսուրա

1.5 Կատարողական արվեստ

- Պարարվեստ

1.6 Թատերական արվեստ

- Դերասանական արվեստ
- Ռեժիսուրա

1.7 Արվեստի տեսություն և պատմություն

- Արվեստի տեսություն, պատմություն և կառավարում
- Թատերագիտություն
- Կինոգիտություն
- Սցենարադրամատուրգիական արվեստ

2. Զ. Ներսեսյանի «Բեմական խոսք առարկայի դասավանդում թատերական բուհի առաջին ուսումնական տարում» մեթոդական աշխատանքը վերադարձնել հեղինակին՝ լրամշակման և խմբագրման:

3. Հաշվի առնելով ինստիտուտի Միջազգային հարաբերությունների, լրացուցիչ և շարունակական կրթության կենտրոնի մեծածավալ աշխատանքային ծանրաբեռնվածությունը, 2017թ. փետրվարի 1-ից կատարել հետևյալ կառուցվածքային փոփոխությունը՝

3.1 լուծարել Միջազգային հարաբերությունների, լրացուցիչ և շարունակական կրթության կենտրոնը,

3.2 Միջազգային հարաբերությունների, լրացուցիչ և շարունակական կրթության կենտրոնի հենքի վրա ստեղծել 2 նոր ստորաբաժանում՝

3.2.1 Միջազգային հարաբերությունների բաժին

3.2.2 Լրացուցիչ և շարունակական կրթության կենտրոն

3.3 ԵԹԿՊԻ-ի հաստիքացուցակում ստեղծել՝

3.3.1 Միջազգային հարաբերությունների բաժնի պետի, պետի տեղակալի և մասնագետի հաստիքներ՝ 1-ական դրույք ծանրաբեռնվածությամբ,

3.3.2 Լրացուցիչ և շարունակական կրթության կենտրոնի համակարգողի հաստիք՝ 0,1 դրույք ծանրաբեռնվածությամբ,

3.4 սույն որոշումն ուժի մեջ համարել 2017թ. փետրվարի 1-ից:

Գիտքարտուղար

Գ. Հովհաննիսյան